

ԱՆԵԿԴՈՏԻ ԺԱՆՐԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՈՃԱԿԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրապես բոլոր տեքստերը դասակարգվում են տարբեր չափանիշներով: Տարբերում ենք տեքստերի դասակարգում՝ ըստ ժանրերի, ոճերի, թեմայի և այլն: Ըստ ոճական հատկանիշների՝ անեկդոտը գրավում է միջանկյալ դիրք զեղարվեստական ոճի և առօրյա-խոսակցական ոճի միջև, իսկ ժանրային դասակարգման տեսանկյունից հանդիսանում է բանախյուսության յուրահատուկ ժանր: Ն. Գասպարյանը նշում է, որ ոճն ընդհանրապես բնորոշվում է իբրև խոսքի բնութագրիչ, դրա տրամաբանական հատկանիշ և ունակություն, որը պայմանավորված է հաղորդակցման խնդիրներով և կոչված է լավագույնս իրականացնելու վերջիններս [1, 11]:

Ինչ վերաբերվում է գրական ժանրի երևույթին, ապա Է. Ջրբաշյանը գտնում է, որ գրական բոլոր ժանրերը առանձնանում են իբրև իրականության նկատմամբ զեղագիտական տարբեր վերաբերմունքի և ստեղծագործության թեմատիկ ու կառուցվածքային տարբեր հատկանիշների կրողներ: Դրանք գրական երկերի ընդհանուր տիպեր են, որոնք աչքի են ընկնում բովանդակության ու ձևի համեմատաբար կայուն հատկանիշներով [3, 134]:

Անեկդոտի տեքստը առանձնանում է իր ժանրային և ոճական յուրահատկություններով: Ինչպես այլ ժանրերի և ոճական այլ պատկանելություն ունեցող տեքստերում, այնպես էլ անեկդոտի տեքստում ժանրային և ոճական հատկանիշները գտնվում են սերտ փոխպայմանավորվածության և փոխկապակցվածության մեջ: Անեկդոտի այնպիսի էական ժանրային առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ բանավորը, ճարտասանական բնույթը, առագ հանգուգավուծումը, ակնհայտ են այս ժանրի գրեթե բոլոր տեքստերում:

Սովորաբար անեկդոտի տեքստը բանավոր հնչեցման ժամանակ է, որ հասնում է իր նպատակին, քանի որ այստեղ կարևորվում են համապատասխան հնչերանգի, ձայնի տոնի, դադարի, թեկուզ և միմիկայի ճիշտ ընտրությունը: Ժանրային այս գծերը փոխադարձաբար կապված են տվյալ ոճին բնորոշ այնպիսի հատկանիշների հետ, ինչպիսիք են՝ հեղինակի խոսքի և կերպարների խոսքի համախմբումը, արտահայտման բանավոր-խոսակցական ձևը, խոսակցական ոճի բառերի ընդգրկումը:

Անորոշ, ընդհանուր դիմելածն անեկդոտի տեքստում ևս խոսակցական ոճի արտահայտություն է: Ցանկացած ոճին բնորոշ է կոնկրետի և

ընդհանուրի արտահայտությունը: Անեկդոտի ժանրում նշված առնաձևահատկության վրա է հիմնված համամարդկային, համընդհանուր և մյուս կողմից՝ նեղ ազգային ժանրային յուրահատկությունների դրսևորումը: Որպես կոնկրետ՝ տվյալ դեպքում հանդիսանում է անեկդոտի ազգային բնույթը, իսկ ընդհանուրը համամարդկային ժանրային յուրահատկությունն է: Անեկդոտների մեծամասնությունում մասնավոր դեպքի քննարկմամբ ներկայացվում է համընդհանուր, համամարդկային երևույթ՝ իր բնութագրիչ կողմերով:

Ասվածը կարելի է հիմնավորել հետևյալ օրինակով.

A city slicker drives through a little town, and stops at a gas station to fill up. Going into the station to pay he sees a man playing checkers with a dog. "Utterly fantastic", he gasps, "a dog who plays checkers. You could take him to the city and make piles of money with him." After his next move the man looks up and says, "Awh, he ain't so smart. I can beat him two times out of three."

Այս տեքստում, ինչպես անեկդոտների մեծ մասում, չունենք գործող անձանց կոնկրետ բնութագրումներ, առավել ևս՝ նկարագրություն: Չնայած անեկդոտը վերցված է ամերիկյան անեկդոտների շարքից, տեքստի ոչ մի միավոր չի վկայում այդ մասին: "A city slicker", "a little town", "a gas station", "a man", "a dog" անորոշ դիմելաձևի արտահայտությունները խոսում են տեքստի համընդհանուր բնույթի մասին. բոլորովին անհրաժեշտություն չկա հերոսների հետագա կոնկրետացման, որը պայմանավորված է նաև տեքստի սեղմ ծավալով: Այստեղ առավել էական է ներկայացվող իրավիճակը, քան թե դեմքերի ազգության ու ինքնության մանրամասները:

Ինչպես վկայում են ոճի սահմանումները՝ առաջարկված տարբեր ոճաբանների կողմից, ոճը պատկանում է արտահայտման, այլ ոչ թե բովանդակության պլանին: Հատկապես գեղարվեստական տեքստերում արտահայտման ձևը մեծ նշանակություն է ստանում: Տեքստում, կարելի է ասել, ձևը լրացուցչային բովանդակություն է ձեռք բերում, որն ուղղորդում է ընկալողի կողմից տեքստի ապակողավորման, ընկալման գործընթացը: Այսինքն՝ խոսողը կամ գրողը (անեկդոտի դեպքում չենք կարող խոսել հեղինակի մասին) տեքստի կողավորումն այնպես է կազմակերպում, որ իր մտադրություններն առավելագույնս մատչելի և հասանելի լինեն ընթերցողին/ստողին: Առավել ևս անեկդոտի ժանրում տեքստի բովանդակության և խոսողի մտադրության երանգները ու նրբությունները կարող են հաղորդվել միայն համապատասխան լեզվաարտահայտչական միջոցների, հնչերանգի, ընդհանրապես խոսքի ճիշտ, անսխալական կիրառման շնորհիվ: Այսինքն՝ ձևի առաջնությունը, որն անեկդոտի ոճական կարևոր հատկանիշներից է, իր կողմից ենթադրում է վերջինիս մեկ այլ ժանրային առանձնահատկություն, այն է՝ ճարտասանական բնույթը: Ճարտա-

սանական բնույթը բացահայտվում է տվյալ ժանրի հիմնական նպատակներից մեկի դրսևորմամբ. խորը, ազդեցիկ, ինչպես նաև հանկարծակի, անսպասելի տպավորություն գործել հանդիսատեսի վրա: Սա նաև ճարտասանության նպատակներից մեկն է: Բայց եթե ճարտասանությունում ավելի շատ կարևորվում է ոչ թե այն, ինչ ասվում է, այլ այն, թե ինչպես է ասվում, ապա անեկզոտի ժանրում բովանդակությունը ևս երկրորդական չէ: Դեռ ավելին, անեկզոտը միշտ ենթադրում է հայեցակարգային և ենթատեքստային տեղեկությունների առկայություն: Պարզապես այստեղ պետք է վարպետորեն կարողանալ գտնել արտահայտման այնպիսի միջոցներ, որոնք առավելագույն ճշգրտությամբ կհաղորդեն խորքային իմաստը կամ գոնե բանալի կհանդիսանան դրա ապակողմորման համար: Ասվածից հետևում է, որ մի կողմից ունենք ժանրային բնութագրիչ՝ ճարտասանական բնույթ, մյուս կողմից՝ ոճական հատկանիշ՝ ձևի, արտահայտման պլանի կարևորություն:

Անեկզոտի մեկ այլ ժանրային առանձնահատկություն, որ շատերի հետ միասին նշում են Ա. Ռոյֆեն, Նիկ. Գարտմանը, Վ. Պրոպալը, Մ. Տվենը, Ե. Կուռզանովը, չափազանցության տարրի առկայությունն է [4; 5; 6; 7; 9]: Գրեթե յուրաքանչյուր անեկզոտ ենթադրում է իրականի և անիրականի, հնարավորի և անհնարի միաձուլում: Շատ դեպքերում հենց անիրական պատմությունների շարադրանքի շնորհիվ՝ բացահայտվում են օբյեկտիվ իրականության բազմաթիվ երևույթներ, իսկություններ, հակակրեկի և անընդունելի համատարած փաստեր: Շատ անեկզոտներում ակնհայտ է չափազանցությունը, որն այնպես հմտորեն է ներմուծվում, շարադրվում, որ լսողը հստակ պատկերացնում է այդ անիրական իրավիճակը: Սակայն չափազանցությունը տեքստի ճշմարտացիության արժեքի վերաբերյալ զարմանք կամ թերհավատություն չի հարուցում: Երբեմն տվյալ երևույթին բնորոշ գծերը, տիպիկ հատկանիշները կարող են տեսանելի դառնալ միայն երևակայական, մտացածին պատկերների միջոցով: Իսկ սա իր հերթին նպաստում է տեքստի արտահայտչական-հուզական, զնահատողական ոճին մի կողմից և պատկերավոր, ֆանտաստիկ ոճին՝ մյուս կողմից. Ինչպես երևում է, անեկզոտի ժանրային հատկանիշները սերտ փոխազդեցության մեջ են գտնվում ոճական առանձնահատկությունների հետ և փոխալայնաձվորված են մեկը մյուսով: Մյուս կողմից՝ ժանրը փոխկապվածության մեջ է գտնվում տեքստի կառուցվածքի հետ, այսինքն՝ ժանրային և կառուցվածքային հատկանիշները ևս պայմանավորում են միմյանց, և դրանք կարող են դիտարկվել որպես միասնական ժանրային-կառուցվածքային առանձնահատկություններ: Այստեղ կառուցվածքային առումով անեկզոտի սեղմ ծավալն ուղեկցվում է սյուժետային օղակների, կերպարների և մանրամասների փոքր քանակով: Այս ժանրում սովորաբար առկա է նաև գործողության

գարգացման հատուկ լարվածությունը (սրան մեծ ուշադրություն է դարձրել Գ. Պոչեպցովը), արագությունը և հանկարծակի, անսպասելի ավարտը՝ «պուլամ-տը», որն այս ժանրի կարևոր կառուցվածքային գծերից մեկն է: Ինչպես առակում, անեկդոտում ևս նկատվում է բարոյախոսական որևէ դրույթի հաստատման միտում, չնայած այն գրեթե միշտ արտահայտվում է քննադատության, ծաղրի միջոցով: Եթե առակում նշված բարոյախոսական իմաստն արտահայտվում է արտակայորեն տեքստի սկզբում կամ վերջում, ապա անեկդոտում այն ստանում է ներակա արտահայտություն: Փաստորեն անեկդոտում արագ հանգուցալուծումն հանդիսանում է և՛ ժանրային, և՛ կառուցվածքային առանձնահատկություն, որը պայմանավորում է դրա կառուցվածքային մեկ այլ, ոչ պակաս կարևոր հատկանիշ՝ սեղմ ծավալը: Օրինակ՝

The Materialistic Lawyer

A lawyer opened the door of his BMW, when suddenly a car came along and hit the door, ripping it off completely. When the police arrived at the scene, the lawyer was complaining bitterly about the damage to his precious BMW. "Officer, look what they have done to my Beeceemer," he whined.

"You lawyers are so materialistic, you make me sick," retorted the officer. "You're so worried about your stupid BMW, that you didn't even notice that your left arm was ripped off."

"Oh my God" replied the lawyer, finally noticing the bloody left shoulder where his arm once was. "Where's my Rolex?!"

Տեքստն ունի վերնագիր, որը միաժամանակ բովանդակային և հայեցակարգային տեղեկության կրողն է հանդիսանում: Նկարագրական ներածական մասին հաջորդում է ուրիշի ուղղակի խոսքից կազմված բուն տեքստը, որտեղ ակնհայտ են բանավոր խոսքի ավանդույթները՝ "look", "Beeceemer", "whined", "ripped off", "Oh, my God" բառային միավորների միջոցով և հնչերանգով: Եվ չնայած, տեքստի վերնագրից սկսած, ունկնդիրը որոշակի պատկերացում է կազմում գլխավոր հերոսի՝ իրավաբանի մասին, այնուամենայնիվ տեքստի հանգուցալուծումը, որն արտահայտված է ավարտական ասության, միանգամայն անսպասելի է. գործում է «խաբուսիկ սպասման» հնարը, ու իրականանում է պուլամտի օրենքը՝ հանկարծակի, անսպասելի հանգուցալուծումը:

Անեկդոտի սեղմ ծավալը ինչ-որ տեղ պայմանավորված է նաև դրա բանավոր բնույթով: Երկար շարադրանքը կարող է ոչնչացնել պատմող-լսող կապը: Ինչպես հայտնի է, տեքստի տեսակի անվանումն արդեն իսկ որոշակի տեղեկատվական արժեք ունի. այն հուշում է, թե ինչ տեսակի տեքստի հետ ենք գործ ունենալու: «Անեկդոտ» անվանումը ենթադրում է ոչ միայն զվարճալի պատմություն, այլև շարադրանքի շատ կարճ և սեղմ ծավալ: Հետևաբար

բանավոր պատմվող երկարածավալ անեկդոտը կարող է ինչ-որ չափով ծանծրացնել լսողին: Չմայած կան նաև դեպքեր, երբ բավականին ծավալուն անեկդոտները չեն հիասթափեցնում ունկնդրին և բնութագրվում են նույն անսպասելի հանգուցալուծումով (օրինակ՝ «Եռյակ» անեկդոտները):

Անեկդոտի կառուցվածքը գրեթե միշտ ենթադրում է պատումի կենդանի ձև, պատմողի և լսողի անմիջական «կոնտակտ», խուսափում է գործողության տեղի, ժամանակի կամ ազգային միջավայրի կոնկրետացումից: Այստեղից բխում է ժանրային մեկ այլ՝ այնպիսի յուրահատկություն, ինչպիսին է համամարդկային, համընդհանուր բնույթը մի կողմից և անորոշությունը՝ մյուս կողմից: Օրինակ՝ First Student – “Great Scott! I’ve forgotten who wrote Ivanhoe.”

Second Ditto – “I’ll tell you if you tell me who the dickens wrote The Tale of Two Cities.”

Այստեղ ակնհայտ է անորոշ դիմելածը, որն անեկդոտի հիմնական բնութագրիչներից է, քանի որ գործող կերպարների մասնագիտությունների իմանալն արդեն իսկ բավական է տեքստի ընկալման համար (շատ դեպքերում նույնիսկ ողջ տեքստը կազմված է լինում միայն գործող անձանց ուղղակի խոսքից): Տեքստի ենթատեքստային տեղեկությունը՝ համատարած տգիտությունը, ենթադրում է անեկդոտի այնպիսի ժանրային հատկանիշի դրսևորում, ինչպիսին է համամարդկային բնույթը. կոնկրետ ամերիկացիների օրինակի վրա մատնանշվում և քննադատվում է տվյալ երևույթը, որը բնորոշ է ընդհանրապես բոլոր ազգերին:

Անեկդոտի կառուցվածքի կարևոր հատկանիշ է «խաբուսիկ սպասման» հնարը, որը կապված է տեքստի առաջադրման կարգի հետ: Անեկդոտ պատմողը նպատակ ունի նախապես ինչ-որ տեղ մոլորեցնել ունկնդրին, ստիպել ակնկալելու որոշակի տրամաբանական, սովորական հանգուցալուծում: Այսինքն՝ գրեթե երբեք ունկնդիրը չի կարողանում ճիշտ գուշակել անեկդոտի ավարտը: Հենց սրանում էլ կայանում է տեքստի այնպիսի ժանրային յուրահատկությունը, ինչպիսին է անսպասելի, հանկարծակի ավարտը: Վերջնամասում չարադրանքը միանգամայն այլ ուղղություն է ստանում, բոլորովին ուրիշ ամփոփում է ունենում, որն էլ լսողի մոտ առաջացնում է ծիծաղ կամ առնվազն ժպիտ:

Անեկդոտն ազգային և համազգային գծերի հետ մեկտեղ ունի հստակ արտահայտված հասարակական բնույթ: Այս ժանրի խնդիրն է ներկայացնել տվյալ հասարակության խնդիրները, կենցաղը, հետաքրքրությունները, մոլորությունները: Լինելով ժողովրդի ստեղծագործություն՝ այն բնականաբար անդրադառնում է ժողովրդի կյանքին, առօրյային, վարք ու բարքին, մտածելակերպին և այլն: Այս ամենը պայմանավորում է անեկդոտի կառուցվածքում բառապաշարի խոսակցական շերտի լայն կիրառումը (կառուցվածքային

հատկանիշ) և խոսակցական-արտահայտչական ոճը մյուս կողմից (ոճական հատկանիշ): Օրինակ՝ his big, brawny, dark-skinned Latin guy walks into a bar. On his shoulder is a beautiful blue- and-red parrot. The bartender says, admiringly

“That’s beautiful; where’d you get it?”

And the parrot says “Down in Mexico; there’s millions of ‘em.”

Այստեղ հանդիպում ենք բառապաշարային խոսակցական շերտի այնպիսի երևույթների, ինչպիսիք են՝ “guy” բառը, կրճատ պատասխան՝ “Down in Mexico” նախադասությունը և “Where’d”, “there’s”, “‘em” կրճատ ձևերը:

Հասարակական բնույթով է պայմանավորված նաև անեկդոտի պարզ կառուցվածքը: Անեկդոտներ ընթերցում և ունկնդրում են ամենատարբեր ոլորտներում և խավերում, բայց, այնուամենայնիվ, այն միջին խավի «սեփականությունն» է և հետևաբար ենթադրում է հնարավորինս պարզ կառուցվածք՝ բնակչության այս հատվածին մատչելի, հասկանալի լինելու համար: Այստեղ վեհ, գեղագիտական, փիլիսոփայական որևէ երևույթ չի ներկայացվում, ոչ էլ գիտության որևէ ճյուղի վերաբերյալ դիտողություններ կան: Ուստի բնական է, որ բացակայում են գիտաբառերը, հղումները, հետգրությունները, իսկ շարադրանքը տարվում է շատ պարզ և հասկանալի ձևով՝ չնայած հարուստ լեզվաարտահայտչական միջոցներով:

Այսպիսով, վերոհիշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ անեկդոտի ժանրը, ոճը, կառուցվածքն իրարից մեկուսացած, բացարձակապես ինքնուրույն բնութագրիչներ չեն: Ժանրային յուրահատկությունները մի կողմից փոխպայմանավորված են ոճական գծերով, ազդում են տեքստի յուրահատուկ ոճի վրա և միաժամանակ իրենց վրա են կրում վերջինիս ազդեցությունը, և մյուս կողմից՝ ժանրային հատկանիշները որոշվում են անեկդոտի տեքստի կառուցվածքային բնութագրիչներով:

Գրականություն

1. Փասպարյան Ն.Բ. Արտոնագրային մասնագրի լեզվաոճական առանձնահատկությունները: Եր.: Լուսանկ, 2007. - 135 էջ:
2. Ջահուկյան Գ.Բ., Խլղաթյան Ֆ.Բ. Հայոց լեզու: Ոճաբանություն: Եր., 1998. - 167 էջ:
3. Տրբաշյան Էդ. Գրական ժանրերի հիմնական չափանիշների մասին: Ե., 1970. էջ 128-140:
4. Гартман Н. Эстетика. М.: Изд. иностр. лит., 1958. - 692 с.
5. Курганов Е. Анекдот как жанр. СПб, 1997 - 124 с.
6. Пропп В.Я. Проблемы комизма и смеха. М.: "Искусство", 1976. - 182 с.
7. Ройфе А.Б. Анекдот и фантастика. Анекдот как феномен культуры. /Материалы круглого стола 16 ноября, 2002г./ СПб: Санкт-Пет. философское общество, 2002. - С. 103-109.
8. Pocheptsov G.G. A Collection of Linguistically Based Jokes, Stories, etc. Kiev: "Visca scola Publishers, Head publishing House", 1981. - P. 307-325.
9. The Art of Mark Twain /William M. Gibson/ N. Y.: "Oxford, University Press", 1976. - 230p.